

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

Ընդհանուր դրույթներ

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրաֆիկացման և ավտոմոբիլային տրանսպորտի գիտահետազոտական ինստիտուտը (այսուհետ՝ ինստիտուտ) ստեղծվել է համաձայն ՀՊԱՀ-ի կանոնադրության 7-րդ կետի «բ» ենթակետի Համալսարանի գիտական խորհրդի 2010 թ. փետրվարի 12-ի թիվ 6 որոշմամբ, որպես Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում, գիտության դեպարտամենտի կազմում:
2. Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրաֆիկացման և ավտոմոբիլային տրանսպորտի գիտահետազոտական ինստիտուտի հիմնադիրը հանդիսանում է Համալսարանը:
3. Ինստիտուտը իրավաբանական անձ չէ և Համալսարանի անունից լիազորված է իրականացնելու գործունեություն՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով, այդ օրենքի հիման վրա ՀՀ կառավարության և այլ իրավասու մարմինների ընդունած իրավական ակտերով, Համալսարանի գիտական խորհրդի, գիտության դեպարտամենտի կանոնադրություններով (կանոնակարգերով), ռեկտորատի որոշումներով և սույն կանոնադրությամբ:

4. Ինստիտուտի կանոնադրությունը հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ և գործողության մեջ է դրվում ՀԱԱՀ ռեկտորի կողմից վավերացվելուց հետո:

5. Ինստիտուտի անվանումն է հայերեն լրիվ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրաֆիկացման և ավտոմոբիլային տրանսպորտի գիտահետազոտական ինստիտուտ.

հայերեն կարճ՝ ՀԱԱՀ ԳՄ, Է և ԱՏԳԻ

ռուսերեն լրիվ՝ Научноисследовательский институт механизации электрификации сельского хозяйства и автомобильного транспорта фонда " Национального аграрного университета Армении".

ռուսերեն կարճ՝ НАУА НИМЭСХ и АТФ

անգլերեն լրիվ՝ Project Constructional Scientific Research Institute of Electrification and Automation of Agriculture of Armenian National Agrarian University

անգլերեն կարճ՝ ANAU PCSRIE and AA

6. Ինստիտուտի հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0009 Տերյան 74

II. Ինստիտուտի գործունեության նպատակներն ու խնդիրները

7. Ինստիտուտի գործունեության նպատակն է.

Նախատեսվում է մշակել, նախագծել, փորձնական խմբաքանակներով արտադրել և արտադրությունում ներդնել ՀՀ գյուղատնտեսության տարածքին բնորոշ ընդհանուր նշանակության, հատուկ և փոքրաչափ մեքենասարքավորումներ:

ա) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արտադրական գործընթացների համալիր մեքենայացման համար մշակել ու ճշտել գիտականորեն հիմնավորված մեքենաների համակարգ:

բ) Ագրոարդյունաբերական համալիրի և սեփականության այլ ձևերի, բեռների և ուղևորների փոխադրումների ավտոտրանսպորտային միջոցների և բեռնման-բեռնաթափման տեխնիկական միջոցների, տեխնիկական սպասարկումների, անվտանգ երթևեկության կազմակերպման և կառավարման ծառայությունների, տրանսպորտային

սպասարկման, տարածքային տրանսպորտային տեսչության ծառայությունների ստեղծումը և այդ բնագավառների գիտագործնական խնդիրների լուծումը:

8. Ինստիտուտի գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական գործունեության հիմնական ուղղություններն ու խնդիրներն են՝ կատարելագործել գոյություն ունեցող տեխնիկական և մշակել նորագույն տեխնոլոգիաներ ու մեքենա-սարքավորումներ հետևյալ տեխնոլոգիական գործընթացների մեքենայացման համար.

-տեխնիկական մշակաբույսերի,

-խաղողագործության ու այգեգործության,

-անտառմելիորացման,

-բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի,

-սածիլային մշակաբույսերի մշակության,

-հողերի մելիորացման,

-խոտհարքների և արոտավայրերի բարելավման,

-կերարտարության,

-նոր տեխնոլոգիաներով սիլոսի և սենածի պատրաստման ու ծղոտի մշակման,

-կերերի նախապատրաստման,

-տրոն, խոնավ ու սեղմված կերախառնուրդների պատրաստման,

-մսուրային և արոտային պայմաններում ջրամատակարարման,

-մսուրային ու արոտավայրային պայմաններում կովերի կթի և կաթի նախնական մշակման,

-ըստ գյուղատնտեսական գոտիների անասնաշենքերից գոմաղբի հավաքման ու ամբարման,

-գոմաղբի ու թռչնաղբի մշակման (աերոբ, անաերոբ, կենսաբանական),

-տեխնոլոգիական գործընթացների էլեկտրաֆիկացման ու ավտոմատացման,

-գյուղատնտեսական գործընթացներում վերականգնվող էներգիայի օգտագործման:

Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում գիտահետազոտական և գիտափորձնական գործունեության հիմնական խնդիրներն են՝

-Ագրոարդյունաբերական համալիրում տրանսպորտային փոխադումների և բեռնման-բեռնաթափման տեխնոլոգիական գործընթացների արտադրական ծրագրերի կազմում և

իրականացում, փոխադրումների արտադրողականության բարձրացման և ինքնարժեքի իջեցման խնդիրների լուծում ժամանակակից մեթոդների լայն կիրառմամբ:

-ՀՀ-ում ավտոտրանսպորտային միջոցների շահագործման պայմանների դասակարգում:

-Շարժակազմի (ավտոմոբիլների, քարշակների, կցորդների, ավտոմոբիլային և տրակտորային գնացքների), բեռնման-բեռնաթափման տեխնիկական միջոցների լավարկված ընտրություն. շահագործական նյութերի արդյունավետ օգտագործման, տրանսպորտային ծառայությունների որակի հսկման ստանդարտացման և հավատարմագրման փորձարկումների կատարում:

-Ավտոտրանսպորտային միջոցների շահագործական հատկանիշների գնահատման բնագավառում հիմնարար և կիրառական հետազոտությունների կատարում:

-Ավտոտրանսպորտային փոխադրումների և անվտանգ երթևեկության կազմա-կերպման վիճակի գնահատման ցուցանիշների փոփոխման դինամիկայի ուսումնասիրություն, վերլուծություն և բարելավման գիտատեխնիկական առաջավոր մեթոդների և միջոցների կիրառում:

-Ավտոտրանսպորտային միջոցների և բեռնման-բեռնաթափման սարքերի կառուցվածքային կատարելագործման նախագծերի մշակում:

-Ագրոարդյունաբերական համալիրում տրանսպորտային փոխադրումների քանակական և որակական հետազոտությունների, պլանի, ծրագրի իրականացման տեխնիկական և կազմակերպչական ապահովում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

II Ինստիտուտի իրավունքները

9. Իր առջև դրված խնդիրներին համապատասխան ինստիտուտն իրավասու է.

- Համալսարանի գիտական խորհրդին առաջարկներ ներկայացնել ինստիտուտի կառուցվածքի, Համալսարանի կանոնադրությամբ նախատեսված կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման և կառավարման համակարգի փոփոխման մասին, ինչպես նաև քննարկել և Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել ինստիտուտի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ,

- գիտական գործունեության ասպարեզում ակնառու նվաճումների համար թեկնածուներ ներկայացնել Համալսարանի գիտխորհրդին՝ Համալսարանի պատվավոր կոչումների, մրցանակների, հուշամեդալների և այլ խրախուսումների համար,

10. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 27-ի թիվ 471 որոշման 4-րդ կետի «դ» և «ը» ենթակետերով Համալսարանին տրված լիազորությունների շրջանակներում իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

- գիտահետազոտական աշխատանքների իրականացում,
- նախագծակոնստրուկտորական աշխատանքների իրականացում,
- մեքենաների արտադրական փորձարկումներ
- գյուղատնտեսության մեքենայացման ոլորտում խորհրդատվական աշխատանքների կազմակերպում և մասնագետների ուսուցում:

11. Ինստիտուտի գործունեության ընթացքում ստացված եկամուտները օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

III. Ինստիտուտի կառավարումը

12. Ինստիտուտի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությանը համապատասխան:

13. Ինստիտուտի անմիջական կառավարման մարմինը ինստիտուտի գիտատեխնիկական խորհուրդն է.

14. Ինստիտուտի գիտատեխնիկական խորհուրդը ինստիտուտի տնօրենի նախագահությամբ գործող գիտատեխնիկական գործունեությունը համակարգող կառավարման մարմին է: Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտատեխնիկական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

15. Ինստիտուտի գիտատեխնիկական խորհուրդը քննարկում է՝

- գյուղատնտեսության մեքենայացմանն առնչվող գիտատեխնիկական աշխատանքների կատարման հայտեր, ընթացիկ, տարեկան և ամփոփիչ հաշվետվություններ,
- առաջարկվող մեքենաների աշխատանքային օրգանների կառուցվածքային նոր լուծումներ, դրանց հասալիությունը բարձրացնող նոր տեխնոլոգիաների մշակումներ,
- դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների թեմաների անվանումներ, դրանց կատարման ընթացքի հաշվետվություններ և ավարտված ատենախոսական աշխատանքներ,
- ինստիտուտի զարգացմանը նպաստող ծրագրեր և ներկայացնում դրանք Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը,

- միջազգային համագործակցության ծրագրեր,
- առաջարկություններ ինստիտուտի կազմը մրցույթային կարգով համալրելու վերաբերյալ: Իրականացնում է սույն կանոնադրությունից բխող գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

16. Գիտատեխնիկական խորհրդի անդամների թվաքանակը չի կարող գերազանցել 15-ը, բայց ոչ պակաս 11-ից:

Գիտատեխնիկական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում է տնօրենը (նախագահ), գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, բաժինների վարիչները: Խորհրդի կազմը համալրվում է բաժինների կողմից առաջադրված ինստիտուտի, Համալսարանի, ինչպես նաև գյուղատնտեսության մեքենայացման բնագավառի հայտնի մասնագետներով: Խորհրդի նախագահի առաջարկությամբ նշանակվում է նախագահի տեղակալ և գիտական քարտուղար:

17. Գիտատեխնիկական խորհրդի նիստը համարվում է իրավագոր նրա անդամների 2/3-ի մասնակցության դեպքում: Խորհրդի որոշումները ընդունվում են խորհրդի նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

Տնօրենի և խորհրդի միջև տարաձայնություններ առաջանալու դեպքում հարցը տեղափոխվում է Համալսարանի գիտական խորհուրդ: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նախագահի պարտականությունները կատարում է նախագահի տեղակալը:

18. Ինստիտուտի տնօրենն ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդում փակ գաղտնի քվեարկությամբ:

- տնօրենը կազմակերպում է ինստիտուտի գործունեությունը և օրենսդրությամբ սահմանված կարգով կրում պատասխանատվություն, գործում է ինստիտուտի անունից, ներկայացնում է դրա շահերը,
- ապահովում է Համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի և ինստիտուտի գիտատեխնիկական խորհրդի որոշումների կատարումը,
- կազմակերպում է ինստիտուտի բաժինների աշխատանքը և ապահովում դրանց ներդաշնակ գործունեությունը,
- հրավիրում է ինստիտուտի գիտատեխնիկական խորհրդի նիստեր,

- Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ինստիտուտի աշխատանքի տարեկան հաշվետվությունը,
- ինստիտուտի տնօրենը ի պաշտոնե Համալսարանի գիտական խորհրդի անդամ է:

IV Ինստիտուտի կառուցվածքը

19. Ինստիտուտի կառուցվածքը սահմանվում է ինստիտուտի գիտատեխնիկական խորհրդի առաջարկությամբ՝ Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա: Կառուցվածքային ստորաբաժանումների կազմը իրավասություններն ու պարտականությունները որոշվում են Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
20. Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գլխավոր ստորաբաժանումը բաժինն է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություններ ունեցող հետազոտողներին:
21. Բաժինը ստեղծվում է ինստիտուտի գիտատեխնիկական խորհրդի առաջարկությամբ և Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ: Այն ղեկավարում է բաժնի վարիչը:

V Ինստիտուտի գիտական գործընթացի կազմակերպումը

22. Ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքները կազմակերպվում են ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության, սույն կանոնադրության և համապատասխան կանոնակարգերի համաձայն:
23. Ինստիտուտի գիտական գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝
 - պետական բյուջեից,
 - պայմանագրերից գոյացած միջոցներից,
 - դրամաշնորհներից,
 - Համալսարանի արտաբյուջեից,
 - հիմնադրամներից, ներառյալ արտասահմանյան և միջազգային կազմա-կերպությունների հատկացումները, քաղաքացիների ներդրումները և այլն:

24. Գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել ինստիտուտի աշխատակիցները, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով հրավիրված մասնագետները:

VI Ինստիտուտի գործունեության դադարեցումը

25. Ինստիտուտի վերակառուցումն ու լուծարումը կատարվում է ՀՀ գործող օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով: